

**Ժենյա Քալանթարյան, Քննադատությունն  
իրրև գործնական գրականագիտություն:  
Ուսումնական ձեռնարկ, Եր.: ԵՊՀ հրատ., 2017,  
209 էջ\*:**

**Բանալի բառեր** – ուսումնական ձեռնարկ, դասագիրք, ուսումնական հարացույց, հարացույցի փոփոխություն, գրական, հայալեզու, գրականագիտական ուսումնական ձեռնարկ:

Հայ բանասերի սեղանին է դրված երկար սպասված բոլորովին **նոր հարացույցի կամ մտածողության** մեջ տեղադրվող մի ուսումնական ձեռնարկ, որը հնարավորինս բացահայտում է տվյալ ոլորտի կամ տեսական առարկայի **պրոբլեմատիկ դաշտը**:

Ժենյա Քալանթարյանի «Քննադատությունն իրրև գործնական գրականագիտություն» ուսումնական ձեռնարկը լիովին տեղավորվում է արդի արևմտյան գրականագիտության դասագրքերի, ուսումնական ձեռնարկների մետատեքստի մեջ, քանի որ այստեղ արդեն տեղ են գտել գիտական հանրության կողմից ընդունված և դեռևս ոչ բոլոր գրականագիտական դասագրքերում տեղ գտած տեսությունների համառոտ նկարագրությունը և սթափ ու ինքնատիպ գնահատությունը:

Սույն ուսումնական ձեռնարկի նորարարական մոտեցումն առավել տեսանելի կլինի, եթե տարածամանակյա կտրվածքում համառոտ դիտարկենք մեզանում եղած խորհրդային ու հետխորհրդային տպագրված դասագրքերը և ուսումնական ձեռնարկները: Հայտնի է, որ խորհրդային տարիներին բուհական ծրագրերով նախատեսված էր գրականությունը մետամակարդակում դիտարկել երկու առարկաների շրջանակում՝ «Գրականագիտության ներածություն» և «Գրականության տեսություն»: Այդ տարիներին հայկական բանասիրականի բազմահազար ուսանողներ ու սերունդներ են կրթվել Էդվարդ Ջրբաջյանի «Գրականագիտության ներածություն: Բանարվեստի հիմունքներ», «Գրականության տեսություն» դասագրքերի հիման վրա:

Այդ նույն շրջանում ԵՊՀ-ի ռուսական բանասիրականի առաջին կուրսի ուսանողները «Գրականագիտության ներածություն» առարկան անցնում էին Գ. Լ. Աբրամովիչի «Գրականագիտության ներածություն»<sup>1</sup> դասագրքով, իսկ «Գրականության տեսություն»-ը՝ Գենադի Պոսպելովի (խմբ.) «Գրականության տեսություն»<sup>2</sup>

\*Ընդունվել է տպագրության 5.12.2017:

1 **Абрамович Г. Л.**, Введение в литературоведение. Пособие для педагогических институтов. Издание второе, исправленное и дополненное, М.: Государственное учебно-педагогическое издательство министерства просвещения РСФСР, 1956. [Abramovich G. L. Vvedenie v literaturovedenie. Posobie dlya pedagogicheskikh institutov. Izdanie второе, ispravlennoe i dopolnennoe, M., Gosudarstvennoe uchebno-pedagogicheskoe izdatel'stvo ministerstva prosveshcheniya RSFSR, 1956].

2 **Поспелов Г.Н.** (ред.). Введение в литературоведение. Учеб. для филол. спец. ун-тов. 3-е изд., испр. и доп. М.: Высшая школа, 1988. [Pospelov G. N. (red.) Vvedenie v literaturovedenie. Ucheb. dlya filol. spec. un-tov. 3-e izd., ispr. i dop., M., Vysshaya shkola, 1988].

և Լեոնիդ Տիմոֆեևի «Գրականության տեսություն հիմունքներ»<sup>3</sup> դասագրքերով: Նկատենք, որ խորհրդային տարիներին հաստատված այս բոլոր դասագրքերը՝ «Գրականության ներածություն» և «Գրականության տեսություն» իրենց բովանդակային պլանով ու արծարծվող խնդիրներով առանձնապես իրարից չէին տարբերվում (գրական պատկեր, բովանդակություն, ձև, պոեզիա, ֆաբուլա, կոմպոզիցիա և այլն), նույն էր նաև մետալեզվական «գործիքների» տեսականին:

Ասվածը բացահայտորեն տեսանելի է էդ. Ջրբաշյանի դասագրքի՝ 2011 թ. բարեփոխված վերահրատարակության անոտագիայում. «Այս ձեռնարկը «Գրականագիտության ներածություն» դասագրքի վերահրատարակություն է, նրա հիմքում ընկած է նաև հեղինակի «Գրականության տեսություն» դասագիրքը, որը 1961–1980 թթ. ընթացքում ունեցել է հինգ հրատարակություն: Դասագրքում շարադրված են տեսական գրականագիտության հիմնական ըմբռնումները, որոնց ընտրությունն ու համակարգումը կատարվել է «Գրականագիտության ներածություն» առարկայի ուսումնական ծրագրի սահմաններում: Նախատեսված է բուհերի բանասիրական ու հումանիտար ֆակուլտետների, ինչպես նաև գրականության ուսուցիչների և գրականագիտության հարցերով հետաքրքրվող լայն շրջանների համար»<sup>4</sup>:

Հետխորհրդային տարիներին՝ երկաստիճան կրթական համակարգին անցնելուց հետո, հայկական բուհերի բակալավրիատում մնաց միայն «Գրականության ներածություն» կամ «Գրականության հիմունքներ» առարկան, և կրթական ծրագրից դուրս մղվեց «Գրականության տեսություն»-ը: Հետխորհրդային տարիներին լույս ընծայվեցին նաև մի քանի նոր դասագրքեր, որոնք տպագրվեցին «Գրականության տեսություն» խորագրի տակ: Խոսքը Ջավեն Ավետիսյանի «Գրականության տեսություն»<sup>5</sup> և Դավիթ ու Մհեր Գասպարյանների «Գրականության տեսություն»<sup>6</sup> դասագրքերի մասին է: Անշուշտ, այս դասագրքերն արդեն գերեծ են «վերևից» պարտադրված քաղաքական կաղապարներից ու հասկացություններից (քննադատական ռեալիզմ, սոցիալիստական ռեալիզմ և այլն). դրանցում զգացվում է նոր շունչը:

Դավիթ և Մհեր Գասպարյանների դասագիրքը գրված է «գրականության մեթոդիկա» և «գրականության տեսություն» առանցքային հասկացությունների համատեքստում, որի թիրախն է «գրականության տեսական գիտելիքների ուսուցումը հանրակրթական դպրոցում և բարձրագույն ուսումնական հաստատություններում»: Բացի այդ՝ «հայ գրականության մեթոդիկայի ասպարեզում տեսական գիտելիքների համակարգված ուսուցումը», ինչը պիտի նպաստեր «հայ և արտասահմանյան գրականության պատմություն առարկաների խոր ու համակողմանի յուրացմանը: Ուսուցումն արդյունավետ դարձնելու նպատակով կիրառված են մեթոդական բազմաթիվ նոր մոտեցումներ և գծապատկերներ»<sup>7</sup>:

Ինչպես նկատում ենք, այս անոտագիան՝ մետալեզվական այս միավորը, ընդգծում է սույն մեթոդական ձեռնարկի մետալեզվական գործառույթը, քանի որ այն կոչված է «հայ և արտասահմանյան գրականության պատմության առարկաների խոր և համակողմանի յուրացմանը»: Մատնանշված «մեթոդական բազմաթիվ նոր մոտեցումները», ի համեմատ նախորդ դասագրքերի, հարկավ, տեսանելի են, բայց այս դասագրքում տեղ չի գտել գրականագետների հանրության կողմից ընդունված

3 Тимофеев А.И. Основы теории литературы. Издание 2-е, исправленное и дополненное. М.: Государственное учебно-педагогическое издательство министерства просвещения РСФСР, 1963. [Timofeev A. I. Osnovy teorii literatury. Izdanie 2-e, ispravlennoe i dopolnennoe, M., Gosudarstvennoe uchebno-pedagogicheskoe izdatel'stvo ministerstva RSFSR, 1963].

4 Ջրբաշյան Էդվարդ, Գրականագիտության ներածություն: Բանարվեստի հիմունքներ, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 2: [Jrbašyan Edvard, Grakanagitovt'yan neracowt'yown: Banarvesti himownk'ner. Barep'oxvac verahatarakowt'yown, Yer., EPH hratarakc'owt'yown, 2011].

5 Ավետիսյան Ջավեն, Գրականության տեսություն: Դասագիրք, Եր., «Նաիրի» հրատ., 1998: [Avetisyan Zaven, Grakanowt'yan tesowt'yown: Dasagirk', Yer., Nairi hrata., 1998].

6 Գասպարյան Դավիթ / Գասպարյան Մհեր, Գրականության տեսություն: Մեթոդական ձեռնարկ, Եր., Հեղինակային հրատարակություն, 2012: [Gasparyan, David. / Gasparyan, Mger. Teoriya literatury. Metodicheskoye posobiye, Yerevan. Avtorskoye izdaniye, 2012].

7 Նույն տեղում, էջ 3: [Ibid., p. 3].

տեսությունների ոչ մի նկարագրություն: Դավիթ և Միեր Գասպարյանների, ինչպես նաև Զավեն Ավետիսյանի «Գրականության տեսություն»<sup>8</sup> դասագրքերը իրենց հարուցված հիմնական խնդիրներով ու բովանդակությամբ խիստ մոտ են «Գրականության ներածություն» առարկայի բնույթին:

Մական հարկ է նշել, որ Զավեն Ավետիսյանը «Հեղինակի կողմից» հատվածում կարևորում է իր դասագրքի նորարարական կողմը, նորույթը (գեղարվեստական ժամանակ և տարածություն, գրական երկի պատմագործառնություն, գեղարվեստական պատում, գիտակցության հոսք, բազմաձայնություն, գեղարվեստական երկի կառուցվածք և այլն), որն իսկապես բացակայում էր խորհրդային տարիներին տպագրված դասագրքերում:

Բացի այդ՝ Զավեն Ավետիսյանը նաև վերանայում է «խորհրդային պաշտոնական գաղափարախոսության»<sup>9</sup> պարտադրած պահանջները: Նրա կարծիքով՝ բանասիրության բաժինների ուսանողությանը, գրականության ուսուցիչներին դա «...հնարավորություն կտա մի նոր տեսանկյունից նայելու գրական երևույթներին, հաղթահարելու գրականության մասին «անթեթելի» պատկերացումները, «օրենսդրական կանոնները», որ տարիներ շարունակ պարտադրվել են»<sup>10</sup>: Այս նույն մոտեցումով է վերանայվել, բարեփոխվել էր. Ջրբաշյանի «Գրականագիտության ներածություն: Բանարվեստի հիմունքներ» գիրքը, որը լույս տեսավ 2011-ին:

Ինչպես նկատում ենք, 2010-ականների գրականության տեսությանը վերաբերող ուսումնական ձեռնարկների խոսույթը վերակտիվանում է: Հայ գրականագետների կողմից շրջանառության մեջ է դրվում հայալեզու մի նոր ուսումնական ձեռնարկ՝ «Գրականության տեսության արդի խնդիրներ»<sup>11</sup> խորագրով՝ պատրաստված ԵՊՀ-ի գրականության տեսության ամբիոնի անդամների ջանքերով:

Ժենյա Քալանթարյանն այս ուսումնական ձեռնարկի «Առաջաբան»-ում կարևորում է տեսական գրականագիտական հետազոտությունների թարգմանության և «հայալեզու գիտական գրականության»<sup>12</sup> անհրաժեշտությունը: Անշուշտ, սեփական լեզվով գիտական խոսույթի ստեղծումն ու անհրաժեշտությունը կարևոր է առնվազն երկու իմաստով. առաջինը՝ լեզվի համար, որ այն չկորցնի իր ձկունությունը, երկրորդը՝ գիտական հանրության, որն ստեղծագործում է տվյալ լեզվով, երրորդը՝ հայալեզու մրցունակ գրականագիտության զարգացման համար:

Ասվածի առումով հետաքրքրական է Ժենյա Քալանթարյանի հետևյալ միտքը: «Առանց ծայրահեղությունների մեջ ընկնելու, շարունակում է տեսաբանը, անհրաժեշտ է հայացնել եզրույթները, հասկացությունները, ստեղծել բառարաններ և գործնականում կիրառել այն ողջմիտ նորը, որը թույլ կտա համընթաց քայլել գրականության տեսության բնագավառում կատարվող ժամանակակից իրողություններին»<sup>13</sup>: Լիովին հիմնավոր է այս կարծիքը: Անշուշտ, լինել ժամանակին համահունչ նշանակում է ունենալ սեփական խոսույթը: Արդի հնչելություն ունեցող խոսույթի բացակայությունը խոսում է տվյալ բնագավառի հետամնացության մասին, ուստի խոսույթի ստեղծումը և դրա զարգացումը տվյալ գիտաձյունի «գործող անձանց» պարտականությունն է:

Խոսույթի շարունակականության առումով տեղին է այստեղ հիշատակել Զավեն Ավետիսյանի «Գրականության տեսություն» դասագրքում տեղ գտած հետևյալ միտքը. «Հեղինակը բավարարված կլինի նաև նրանով, եթե այս դասագիրքը պատճառ դառնա հայ գրականագետների նոր ձեռնարկումների, ձեռնարկումների,

8 **Ավետիսյան Զավեն**, Գրականության տեսություն: Դասագիրք, Եր., «Նաիրի» հրատ., 1998: [Avetisyan Zaven, Grakanowt'yan tesowt'yown: Dasagirk', Yer, Nairi hrat., 1998].

9 Նույն տեղում, էջ 6: [Ibid., p. 6].

10 Նույն տեղում, էջ 8: Ibid., p. 8].

11 Գրականության տեսության արդի խնդիրներ: Ուսումնական ձեռնարկ. Եր., ԵՊՀ հրատ., 2016 / [http://publishing.yu.am/files/Grakanutyay\\_tesutyay\\_ardi\\_himnakhndirner.pdf](http://publishing.yu.am/files/Grakanutyay_tesutyay_ardi_himnakhndirner.pdf) -01.12.2017:

12 **Քալանթարյան Ժենյա**, Առաջաբան, Գրականության տեսության արդի խնդիրներ: Ուսումնական ձեռնարկ, էջ 4: [K'alant'aryan Zhenya, Ar'ajaban, Grakanowt'yan ardi xndirner. Owsowmnakan jernark, p. 4].

13 Նույն տեղում, էջ 4: [Ibid., p. 4].

որ պահանջում են տեսության խնդիրներով զբաղվելու և առարկան դասավանդելու տարիների փորձ ու համառություն»<sup>14</sup>: Ըստ էության գիտնականը կարևորում է խոսույթի փոխկապակցության անհրաժեշտությունը, որը պիտի կրի կուռույատիվ ու գեներատիվ (սերող) բնույթ: Բացի այդ՝ Զավեն Ավետիսյանը կարևորում է նաև հայ տեսաբանների մոտիվացիոն ու կամային կողմը («համառությունը») և դասավանդման փորձը, որը պետք է խոսույթը բերի արդեն նոր մակարդակի վրա՝ ժամանակակից գրականագիտության պահանջներին համահունչ:

Ի համեմատ նախորդ փորձի՝ 2016 թ. տպագրված «Գրականության տեսության արդի խնդիրներ» ձեռնարկում արդեն խորացվում են գրականագիտական բազմաթիվ հասկացություններ ու իրողություններ (միջտեքստայնություն, քրոնոտոպ, գրականություն և միֆ և այլն), բացի այդ՝ այստեղ արդեն ներկայացվում է պատումի տեսությունը և դրա հասկացական ապարատը՝ մետալեզոն: Խոսքը Աշխեն Զրբաշյանի՝ «Գրականության տեսության արդի խնդիրներ» ձեռնարկի մեջ տեղ գտած «Նարատոլոգիայի հիմնական հասկացությունները» «տաք» հատվածի մասին է, որը, ինչպես դիպուկ նկատում է Ժենյա Քալանթարյանը, «առանձին վերցրած կարող է ծառայել իբրև ձեռնարկ նույնանուն դասընթացի համար»<sup>15</sup>:

Եթե «Գրականության տեսության արդի խնդիրներ» ձեռնարկում գրականագիտական մեթոդներից միայն պատումի տեսությունն է ներկայացվում «մաքուր» ձևով, ապա Ժենյա Քալանթարյանի «Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն» ձեռնարկում գրականագիտական մեթոդներին հատկացվում է բավականին մեծ տեղ<sup>16</sup>: Կարծում ենք, որ այստեղ է երևան գալիս հայալեզու ուսումնական ձեռնարկի խոսույթի ակնհայտ տեղաշարժը և նորարարությունը, որտեղ մեծ տեղ է հատկացվում գրականագիտական տեսությունների ներկայացմանը (հերմենևտիկա, ֆենոմենոլոգիա, ռեցեպտիվ գեղագիտություն, միֆաքննադատություն, հեգեվերլուծական տեսություններ):

Կարծում ենք՝ այժմ հասունացել է այն պահը, որ ստեղծվի նաև հայալեզու նմանատիպ ուսումնական ձեռնարկ, որտեղ պետք է ներկայացվեն միմիայն գրականագիտության ընդունված տեսությունները: Ժամանակ է, որ հայալեզու ուսումնական խոսույթում **առավել մանրամասն** ներկայացվի նաև կառուցվածքաբանությունը՝ ըստ առանձին հեղինակների (Ռոման Յակովլև, Կոլո Լևի-Ստրոս, Ցվետան Տոդորով, վաղ Յուրի Լոտման և այլն), նշանագիտությունը<sup>17</sup>, կառուցվածքային հոգեվերլուծաբան ժակ Լականի տեսությունը<sup>18</sup>, պոստկառուցվածքաբանները (Ժիլ Դեյոզ, Ժակ Դերիդա և այլն), սոցիոլոգիական ուղղվածություն ունեցող գրականագիտական տեսությունները (Վալտեր Բենիամին, Թեոդոր Ադորնո, Մաքս Հորքայմեր, Գեորգ Լուկաս, Նիկլաս Լոման, Պիեր Բուրդյե<sup>19</sup> և այլն), գենդերային տեսությունները, էմպիրիկ գրականագիտությունը, ճանաչողական պոետիկան (Cognitive Poetics) և այլն: Բայց այս ամենը բավարար չէ:

Անհրաժեշտ է, որ բուհական ուսումնական պրոցեսում մեծ տեղ հատկացվի (ժամաքանակի առումով) մետալեզոն սովորեցնող և մետալեզվական մտածողություն ձևավորող առարկաներին: Օրինակ՝ «Գրականագիտության ներածության» դասըն-

14 Ավետիսյան Զավեն, Գրականության տեսություն: Դասագիրք, Եր., «Նաիրի» հրատ., 1998, էջ 8: [Avetisyan Zaven, Grakanowt'yan tesowt'yown: Dasagirk', Yer., Nairi hrat., 1998].

15 Քալանթարյան Ժենյա, Առաջաբան, Գրականության տեսության արդի խնդիրներ: Ուսումնական ձեռնարկ, էջ 4: [K'alant'aryan Zhenya, Arajaban, Grakanowt'yan ardi xndirner. Owsowmnakan jernark, p. 4].

16 Տեն Քալանթարյան Ժենյա, Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 77-173/[http://publishing.yasu.am/files/Qnnadatutyuny-ibrev\\_grakanagitutyun.pdf](http://publishing.yasu.am/files/Qnnadatutyuny-ibrev_grakanagitutyun.pdf) -01.12.2017:

17 Առանձին փորձ արված է: Տեն Սիմյան Տիգրան, Գրականագիտության «գործարարը». մեթոդ, տեքստ, ընթերցող, մեկնաբանող, Եր., Մեկնարկ, 2015, էջ 14-51: [Simyan Tigran, Grakanagitowt'yan gorcaranə. met'od, tek'st, ənt'ercog, meknabanog, Yer., Meknark, 2015].

18 Տեն նաև Քալանթարյան Ժենյա, Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն, էջ167-172: [K'alant'aryan Zhenya, K'nnadatowt'yownn ibrev gorcnakan grakanagitowt'yown. Yer., EPH hrat., 2017].

19 Տեն Սիմյան Տիգրան, Գրականագիտության «գործարարը». մեթոդ, տեքստ, ընթերցող, մեկնաբանող, էջ 131-134: [Simyan Tigran, Grakanagitowt'yan gorcaranə. met'od, tek'st, ənt'ercog, meknabanog, Yer., Meknark, 2015].

թացի շրջանակում ավելի շատ շեշտադրումը արվի գրականագիտական տեսությունների («ակնոցներ»), մետալեզվի դասավանդման վրա, այլ խոսքով՝ գրականագիտական «տաք» խնդիրներին, որոնք լավ հենք կտան ուսանողին գրականության պատմության դասընթացի ընթացքում թեստավորելու արդեն յուրացված տեսությունները, հմտանալու այդ տեսությունների հետևողական կիրառության մեջ՝ հայ և արտասահմանյան գրողների երկերն առավել **համակարգված, համադրված ու վերլուծական** ներկայացնելու համար:

Հակառակ դեպքում ուսանողը գրականության պատմության էմպիրիկ այդ ահռելի նյութը կարդում է առանց «ակնոցի», ֆոկուսի, տեսության: Տեսությունն է պայմանավորում դիտանկյունը: Դա է պատճառը, որ ուսանողը գրական տեքստն ընթերցելիս տեսնում է գրական երկի միայն մերկապարանոց սյուժեն: Ուստի միմիայն «տաք» թեմաների, խնդիրների համատեքստում է հնարավոր, որ ուսանողը գրական երկերը ընթերցելիս ձևավորի ֆոկուս-նպատակ և ֆոկուս-թեմա:

Ժենյա Քալանթարյանի «Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն» ուսումնական ձեռնարկն ունի իր ֆոկուս-թիրախները. դրանք են՝ քննադատության առարկան, պատմական ուղու ուրվագծումը, արդի փուլում քննադատության մարտահրավերները և դրա ստատուսի խնդիրը, քննադատական (գրականագիտական) մեթոդները, քննադատության ժանրերն ու գիտականության հետ կապված առանձնահատկությունները: Հուսով ենք՝ այս ամենը յուրացնելուց հետո երիտասարդ գրականագետները բավարար հենք կունենան մրցունակ ու գիտական տեքստեր ստեղծելու համար:

«Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն» ուսումնական ձեռնարկը շոշափում է արդի փուլի գրականագիտության «ամենատաք» խնդիրներից մեկը, այն է՝ հումանիտար գիտությունների «ձգնաժամի» և գրականագիտության (գրաքննադատության) փոխհարաբերությունը, քննադատության տեղի ու դերի հարցը<sup>20</sup>: Անշուշտ, բացի «տաք» խնդիրներից՝ ձեռնարկում տրվում է նաև ֆոնային գիտելիք, որտեղ նախապես ներկայացվում է քննադատության առաջացումը, առարկան, պատմական ընթացքը՝ Անտիկ շրջանից մինչև Ուշ միջնադար<sup>21</sup>: Նույն տրամաբանությունը պահպանված է նաև տեքստային հաջորդ բլոկում, որտեղ մինչև գրականագիտական մեթոդները պատկերացում է տրվում գիտական (ոչ թե գեղարվեստական) մեթոդի մասին<sup>22</sup>:

«Տաք» խնդիրների դաշտում է նաև քննադատության ժանրերի ներկայացումը (գրախոսություն, քննադատական դիմանկար, տեսական հոդված, մենագրություն, բանավեճ, երկխոսություն, էսսե, էսքիզ, ռեպլիկ և այլն)<sup>23</sup>, ինչը պատկերացում է տալիս ուսանողին գրաքննադատի ժանրային հարացույցի մասին («լեզու»), այլ խոսքով՝ ժանրային «պահեստի», որտեղից կարող է օգտվել սկսնակ գրաքննադատը. ընտրել համապատասխան ժանրը՝ իր տեքստը, խոսույթը կերտելու ու շարունակելու համար («խոսք»):

Սույն ուսումնական ձեռնարկը կարևոր է նաև նրանով, որ այն գրաքննադատին ներկայացնում է ոչ միայն սեփական ասելիքի ձևային պլանը (ժանր), այլ նաև ներտեքստային հմտությունները, թե ինչպես պետք է գրաքննադատը գրախոսի, «գնահատի, թե՛ արժեվորի»<sup>24</sup> և իր գրախոսականներում համադրի տարբեր գիտնականների կարծիքներն<sup>25</sup>, ասել է թե՛ ապահովի գրախոսության «բազմաձայնությունը»:

20 Տե՛ս Քալանթարյան Ժենյա, Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն, էջ 53-76: [K'alant'aryan Zhenya, K'nnadatowt'yowonn ibrev gorcnakan grakanagitowt'yown. Yer., EPH hrat., 2017].

21 Տե՛ս նույն տեղում, էջ 6-52: [Ibid., p. 6-52].

22 Տե՛ս նույն տեղում, էջ 174-208: [Ibid., p. 174-208].

23 Տե՛ս նույն տեղում, էջ 77-81: [Ibid., p. 77-81].

24 Տե՛ս նույն տեղում, էջ 209-224: Այդ մասին տե՛ս նաև Ավետիսյան Զավեն, Գրականության տեսություն, էջ 181-200: [Ibid., p. 209-224. Avetisyan Zaven, Grakanowt'yan tesowt'yown, p. 181-200]. [K'alant'aryan Zhenya, K'nnadatowt'yowonn ibrev gorcnakan grakanagitowt'yown. p. 230-289].

25 Տե՛ս Քալանթարյան Ժենյա, Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն, էջ 230-289:

Ինչպես նկատում ենք, թե՛ ժանրերի նկարագրության, թե՛ քննադատի արժեքավորման vs / և գնահատման, թե՛ տարբեր գիտնականների կարծիքների համադրման անհրաժեշտությունը վկայում են «տաք» խնդիրներ շոշափելու փաստի մասին, քանի որ ցանկացած սկսնակ քննադատ, գրականագետ բախվում է այս խնդրին: Ուստի կարելի է մի եզրահանգում անել, որ հենց այդ «տաք» խնդիրներն են թույլ տվել հեղինակին ուսումնական ձեռնարկն անվանել «Քննադատությունը իբրև գործնական գրականագիտություն»:

Վերը շարադրվածից կարելի է ևս մի հետևություն անել՝ հայալեզու ուսումնական ձեռնարկի խոսույթում ուսանողներին, ասպիրանտներին, դոկտորանտներին, գրականությանը հետաքրքրվողներին ներկայացվում են առավել «տաք» խնդիրներ, տրվում է ավելի «տաք» մետալեզու, վերլուծական «գործիքներ»՝ հետազոտական մարտավարությունը ու հետազոտությունների թեմատիկ պլանն առավել ձկուն ու լայն դարձնելու համար:

Հուսով ենք, որ Ժենյա Բալանթարյանի «Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն» ուսումնական ձեռնարկը օրինակ է ծառայելու այլ հեղինակների համար հետագա ուսումնական ձեռնարկների խոսույթում իրենց թիրախում ունենալու միմիայն «տաք» խնդիրներ: Դրանք ապագա գրականագետներին տալու են օգտակար «գործիքներ», որոնց միջոցով հայագիտական հետազոտությունները կդառնան առավել մրցունակ և դուրս կգան այլ լեզուներով գիտական լայն խոսույթի տարածք. չէ՞ որ արդի գրականագիտությանը համահունչ մետալեզվական առարկաները և գիտնականի լեզվի իմացությունը հայագիտության միջազգայնացման գրավակասն են:

Տիգրան Ս. Սիմյան  
*Բանաս. գիտ. դոկտոր*

**Տիգրան Ս. Սիմյան** – գիտական հետազոտությունների բնագավառները՝ հումանիտար գիտությունների մեթոդների պատմություն, գրականության և մշակույթի նշանագիտական խնդիրներ, 17-20 դդ. գերմանական գրականության պատմություն:

tsimyan@ysu.am

## Summary

**Zhenya Kalantaryan, Literary criticism as Practical Literary Studies: Textbook. YSU: YSU Publishing House, 2017. 209 p.**

Tigran S. Simyan

**Key words** – textbook, paradigm of education, change of paradigm, change of educational paradigm, Armenian-writing textbook of theory of literature, theory of literature, literary criticism, introduction to literary studies.

The purpose of the annotation is to comprehend and evaluate in diachrony the training manual „Literary Criticism as Practical Literary Studies“ by Zhenya Kalantaryan in the context of the Armenian-language discourse of textbooks of the Soviet and post-Soviet period, as well as to show the novelty and innovation of this publication. A brief overview of Armenian-language textbooks at the „Literature Theory“ course or „Introduction to Literary Studies“ showed that textbooks of the Soviet era were politicized,

often the problematics were dictated „from above“. In the 1990's. these textbooks were confirmed by the Revision. After the collapse of the USSR, Zaven Avetisyan and David / Mher Gasparyan were presented in their textbooks teaching aids in a context of the course „Introduction to Literary Studies“ in a much new way, visualized, structured and apolitical (but fast with the same problems). 2016 in the collective textbook „Contemporary problems of the Theory of Literature“, in comparison with the previous experience, metalanguage concepts were presented much more “hot” („Basic concepts of narratology“), etc. Study book of Zhenya Kalantaryan „Literary Criticism as Practical Literary Studies“ is, according to the author of the annotation, one of the important events in the Armenian-language discourse of teaching aids, since the problematics and metalanguage of Literary Criticism are presented in a much “hot” way. Such a toolkit creates all the comfort to provide young scientists and students with new opportunities for a more innovative, strategically correct and systematic analysis of artistic texts. In addition, the composition of the textbook Zh. Kalantaryan is presented in the review, as well as the relationship between the part and the whole, the composition and the title of the textbook.

## Резюме

**Женя Калантарян, Литературная критика как практическое литературоведение: Учебное пособие. ЕГУ: Изд.–во ЕГУ, 2017. 209 с.**

Тигран С. Симян

**Ключевые слова** – учебное пособие, учебник, парадигма образования, изменение парадигмы, смена образовательной парадигмы, армяноязычное учебное пособие по теории литературы, теория литературы, введение в литературоведение.

Цель аннотации осмыслить и оценить в диахронии учебное пособие «Литературная критика как практическое литературоведение» Жени Калантарян в контексте армяноязычного дискурса учебных пособий и учебников советской и постсоветской эпохи, а также показать инновативность и новизну данного издания. Краткий обзор армяноязычных учебников и учебных пособий по курсу «Теория литературы» или «Введение в литературоведение» показал, что учебники советской эпохи были политизированы, отчасти проблематика была продиктована «сверху». В 1990-е гг. эти учебники подверглись ревизии. После развала СССР на новом эмпирическом материале, намного визуализировано, структурировано и аполитично (но с той же самой проблематикой) они были представлены в учебниках и учебных пособиях Завена Аветисяна и Давид / Мгер Гаспарянов в контексте курса «Введение в литературоведение». В 2016 г. в коллективном учебном пособии «Современные проблемы теории литературы», по сравнению с предыдущим опытом, метаязыковые понятия были представлены намного нагляднее («Основные понятия нарратологии») и т.д.

Учебное пособие Жени Калантарян «Литературная критика как практическое литературоведение» является, по мнению автора аннотации, одним из важных событий в армяноязычном дискурсе учебных пособий, поскольку проблематика и метаязык литературоведения в нем представлен в намного «горячем» режиме. Подобный инструментарий создает все условия для предоставления молодому поколению ученых и студентов новых возможностей для более инновативного, стратегически правильного и систематизированного анализа художественных текстов.